ՀՊՄՀ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Երևան 09.07.2014 թ.

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ՀՊՄՀ), ի դեմս ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, և, մյուս կողմից «ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ» (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս տնօրեն՝ Վիկտոր Լիպարիտի Կատվալյանի, ով որոշում է կանոնադրության հիման վրա, կնքեցին սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. Կողմերը հայտարարում են, որ ՀՊՄՀ-ի «Համալսարան-Գործատու համագործակցության կենտրոնի» կողմից իրականացվող ծրագրերի շրջանակում նպատակ ունեն փոխադարձության սկզբունքով աջակցել միմյանց և պատրաստ են փոխշահավետ ծրագրերի իրականացման եղանակներով համագործակցել՝

ա) ՀՊՄՀ-ի ուսանողների, մագիստրոսների, շրջանավարտների, ասպիրանտների, հայցորդների (այսուհետ՝ անհատապես՝ Մասնագետ, իսկ երկու կամ ավելի անձիք՝ Մասնագետներ) աշխատանքային և մասնագիտական առաջընթացի և

բ) կազմակերպությանը որակյալ մասնագետներով համալրելու խնդիրների լուծման շրջանակում:

2. Սույն Հուշագրի 1-ին կետում նշված նպատակներն իրագործելու և խնդիրները լուծելու համար Կողմերը առանձին պայմանավորվածությունների շրջանակում Կողմերի համար ընդունելի համարվող եղանակներով՝

ա) կկազմակերպեն և կանցկացնեն կոնֆերանսներ, սեմինարներ, սիմպոզիումներ, հանդիպումներ, մրցույթներ, խորհրդակցություններ, այլ միջոցառումներ,

բ) կհամագործակցեն այլ նախաձեռնությունների և ծրագրերի իրականացման շրջանակում,

գ) կիրականացնեն տեղեկատվության փոխանակում:

3. Կողմերը հայտարարում են, որ սույն Հուշագրի 2-րդ կետի գ) ենթակետում նշված տեղեկատվությունը, որը վերաբերում է մասնագետի անհատական տվյալին(ներին), Կողմերն իրավունք ունեն պահպանել և/կամ օգտագործել

բացառապես սույն Հուշագրի 1-ին կետում նշված նպատակներով և խնդիրների լուծման համար:

Բացառությամբ սույն Հուշագրով և ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի, առանց Մասնագետի գրավոր թույլտվության անհատական տվյալը(ները) ենթակա չեն էլեկտրոնային մշակման, պահպանման կամ բացահայտման երրորդ անձանց համար, ներառյալ՝ հրապարակման, ցուցադրման, տարածման, փոխանցման, փոխանակման, հրատարակման կամ որևէ այլ եղանակով երրորդ անձանց իրազեկման կամ հաղորդման կամ հասանելի դարձնելուն՝ այդ թվում էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի միջոցներով կամ էլեկտրոնային կամ փաստաթղթային կրիչներով կամ ցանկացած այլ միջոցներով: Փոխանցված անհատական տվյալները կազմում են Հուշագրի անբաժանելի մաս կազմող համարակալված Հավելված:

4. Անհատական տվյալը(ները) տրամադրվում է (են) օրենքով թույլատրելի գրավոր եղանակով, ներառյալ՝ էլեկտրոնային կապի միջոցներով՝ խորհրդապահության կանոնների պահպանմամբ:

5. Սույն Հուշագրի շրջանակում ըստ անհրաժեշտության կամ նպատակահարմարության Կողմերը կարող են ձևավորել մշտական կամ ժամանակավոր աշխատանքային խմբեր:

6. Սույն Հուշագրի 2-րդ կետով նախատեսված տարբեր միջոցառումների, խնդիրների և/կամ ծրագրերի իրականացման ուղղությամբ ծավալուն և առարկայական համագործակցելու դեպքում, ըստ անհրաժեշտության Կողմերը կարող են կնքել առանձին պայմանագրեր, որոնցով կկարգավորվեն համապատասխան աշխատանքների իրականացման ձևը, բովանդակությունը, կարգը, այլ մանրամասները, ինչպես նաև Կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

7. Սույն Հուշագրով Կողմերի համար որևէ ֆինանսական պարտավորություններ չեն ծագում:

8. Հուշագրից բխող խնդիրները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Կողմերից յուրաքանչյուրը պատասխանատու է իր գործողությունների կամ անգործության համար:

9. Հուշագիրը Կողմերի համար (մի կողմից՝ ՀՊՀՄ, և մյուս կողմից՝ կազմակերպությունը) ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ: Կողմերից յուրաքանչյուրը կարող է միակողմանի դադարեցնել իր մասնակցությունը սույն համագործակցության հուշագրում՝ առնվազն 1 (մեկ) ամիս առաջ դրա մասին գրավոր տեղեկացնելով մյուս Կողմերին: Այդ դեպքում Կողմերը պարտավորվում են գործադրել ջանքեր, որպեսզի Հուշագրի վաղաժամկետ դադարեցումը չխոչընդոտի ընթացքում գտնվող միջոցառումների բարեհաջող ավարտմանը:

10. Սույն Հուշագրի շրջանակում ՀՊՄՀ-ից դուրս անհատական տվյալ(ներ) տրամադրելու իրավատությամբ օժտված է ՀՊՄՀ-ի «Համալսարան-գործատու

համագործակցության կենտրոնի» անմիջական ղեկավարը, իսկ նրա բացակայության դեպքում՝ ՀՊՄՀ իրավասու պրոռեկտորը:

11. Կողմերի պաշտոնական հաղորդակցության միջոցներն են՝

11.1. ՀՊՄՀ-ի՝

11.1.1.«Համալսարան-Գործատու համագործակցության կենտրոն» (ՀՀ., Երևան, Տիգրան Մեծ, 17, հեռ. (374 10) 59-22- 62, էլ.հասցե՝uecc@armspu.am),

11.1.2. Բանասիրական ֆակուլտետի դեկանատ (ՀՀ., Երևան, Ալեք Մանուկյան, 13, հեռ. (+374 10) 55-60-30, էլ.հասցե՝ philology@armspu.am):

12. «ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ» (ՀՀ., Երևան, Գր.Լուսավորչի փ., 15, հեռ. (+374 10) 56-53-37, էլ.հասցե՝ inslang@sca.am):

13. Սույն Համաձայնագիրը կնքված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ: Ի վկայություն վերոգրյալի՝ սույն Համաձայնագրի կողմերը 09.07.2014թ.-ին այն վավերացնում են իրենց ստորագրությամբ:

ՀՊՄՀ ռեկտոր
Ռուբեն Միրզախանյան

ստ.

«ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտ» տնօրեն՝
Վիկտոր Կատվալյան

ստ.